բութեան ամենայնք, և անդ մնիցէ ; ՃԶ Հաւ երախան սրբոյն, յորում Քս̄ ճաշակի, վերապատուին յիշտ̄կ նորին չարչր̄նց, և միշտ ճոխանամք շնորհիւ հանդերձելոց փառացն, մեզ առհաւատչեայ շնորհի՛ ալէլուիա :

ՃԷ որ մեզ ետ խորհրդոյ սքան-չելոյ, զյիշտ̄կ չարչր̄նց քոց Թողեր, տուր մեզ աղաչեմք, զսրբոյն խորհուրդ-մարմնոյ քոյ և արեան այնպ̄ վերապա-տուել, զի զպտուղ քոյոյ փրկագործու-Թե̄ 'ի մեզ յաճախաբար զգասցուք; որ կեաս և Թգ̂րես ը̄. հօր :

ՃԸ ասելով զերիս հայր մերս, և ողջոյնս; արասցէ զներգործութին հա-մառօտս հաւատոյ, յուսոյ, սիրոյ, և ողջման, ոպ̄ իվերն :

ՃԹ արասցէ՛ յետայսորիկ, և զսե-ղանն ա̄ծածնի, ասելով, ողջոյն քեզ ասողն; որ'ի վերն գրեցեալէ; կամ զհե-տևեալս .

Ով փառաւորեալ միշտ սրբուհի կոյս մարիամ ա̄ծածին, որ միայն ար-ժանի եղեր տանել զտ̄րն, և դիեցու-

ցա